# «Մակաբացման աշխատանքների գծով ծախսերի՝ արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքին վերագրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2018 թվականի _____-Ն

ՄԱԿԱԲԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ՝ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎՈՂ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻՆ ՎԵՐԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել մակաբացման աշխատանքների գծով ծախսերի՝ արդյունահանվող օգտակար հանածոների ինքնարժեքին վերագրման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագող (ծագած) հարաբերությունների վրա:

Հավելված

ՀՀ կառավարության 2018 թվականի

---------ի N ------ Ն որոշման

Կ Ա Ր Գ

# ՄԱԿԱԲԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ՝ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎՈՂ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻՆ ՎԵՐԱԳՐՄԱՆ

## Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 121-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն մակաբացման աշխատանքների գծով ծախսերի՝ արդյունահանվող օգտակար հանածոյի ինքնարժեքին վերագրելու կարգը:
2. Սույն կարգի կիրառության իմաստով՝ ստորև նշված հասկացություններն ունեն հետևյալ իմաստն ու նշանակությունը՝

1) ***մակաբացում***՝ բաց եղանակով շահագործվող օգտակար հանածոյի հանքավայրի դատարկ ապարների (մակաբացվող ապարների) հեռացում՝ օգտակար հանածոյի պաշարներին հասանելիություն ստանալու համար.

2) ***մշակման փուլում մակաբացման գծով ակտիվ***. բաց հանքի մշակման փուլում (մինչև հանքի շահագործումը սկսելը) կատարված մակաբացման ծախսեր.

3) ***շահագործման (արտադրական) մակաբացման ծախսեր***. բաց հանքի շահագործումը սկսելուց հետո (արտադրական փուլ) կատարված մակաբացման ծախսեր,

4) ***մակաբացման քանակ***. մակաբացման ժամանակ հեռացված դատարկ ապարների (մակաբացվող ապարների) քանակն է:

## II. ՄՇԱԿՄԱՆ ՓՈՒԼԻ ՄԱԿԱԲԱՑՄԱՆ ԳԾՈՎ ԱԿՏԻՎԻ ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԳՐՈՒՄԸ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎՈՂ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻՆ

3. Հանքի մշակման փուլում (մինչև շահագործումը սկսելը) կատարված մակաբացման բոլոր ծախսերը կապիտալացվում են որպես մշակման փուլի մակաբացման գծով ակտիվ: Շահագործումը սկսելու հետո մշակման փուլի մակաբացման գծով ակտիվն ամորտիզացվում է հաստատված օգտակար հանածոյի ընդհանուր պաշարի արդյունահանմանը համամասնորեն: Ամորտիզացիան հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$ԱՄ_{ՄՓ.ՄԱ.ԱՄ} = ԱՐ_{ՄՓ.ՄԱ.ԱՐ} \times Ք_{ՀՏ.ԱՊ.Ք} / Ք_{ՊՀ.ԱՊ.ԸՔ},$$

որտեղ՝

$ԱՄ_{ՄՓ.ՄԱ.ԱՄ}$՝ մշակման փուլի մակաբացման գծով ակտիվի ամորտիզացիայի գումարն է,

$ԱՐ_{ՄՓ.ՄԱ.Ար}$՝ մշակման փուլի մակաբացման գծով ակտիվի արժեքն է՝ առանց կուտակված ամորտիզացիայի գումարը նվազեցնելու,

$Ք_{ՀՏ.ԱՊ.Ք}$՝ հաշվետու տարում արդյունահանված պաշարների քանակն է,

$Ք_{ՊՀ.ԱՊ.ԸՔ}$՝ պետության կողմից սահմանված կարգով հաստատված՝ արդյունահանման ենթակա պաշարների ընդհանուր քանակն է, առանց նախկինում արդյունահանված պաշարների քանակը նվազեցնելու: Արդյունահանման ենթակա պաշարների ընդհանուր քանակը որոշելիս հաշվի են առնվում այդ պաշարների քանակի սահմանված կարգով իրականացված փոփոխությունները:

4. Հաշվետու տարվա ընթացքում մշակման փուլի մակաբացման գծով ակտիվի ամորտիզացիայի գումարը ներառվում է այդ տարվա ընթացքում արդյունահանված օգտակար հանածոյի ինքնարժեքում:

III. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ) ՓՈՒԼԻ ՄԱԿԱԲԱՑՄԱՆ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԳՐՈՒՄԸ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՎՈՂ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻՆ

5. Հանքի շահագործման (արտադրական) մակաբացման ծախսերը ներառում են մակաբացմանն ուղղակիորեն վերաբերող ծախսերի հանրագումարը՝ գումարած մակաբացմանը վերագրելի վերադիր ծախսերը:
6. Հաշվետու տարվա ընթացքում հանքի շահագործման (արտադրական) մակաբացման ծախսերի առավելագույն գումարը, որն անմիջականորեն կարող է ներառվել այդ տարվա ընթացքում արդյունահանված օգտակար հանածոյի ինքնարժեքում հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$Ծ_{ՀՏՄԾ.ԱԳ} = Գ_{ԱՓ.ՄՊ.ՄՔԳ} \times Ք_{ՊՀ.ԱՊ.ԸՔ} \times Ի_{ՀՏ.ՄՓ.Ի}$

$Գ_{ԱՓ.ՄՊ.ՄՔԳ} = (Ք_{ՄԱՓ.ՄԸ.Ք} - Ք_{ՄՓ.ՓՄ.Ք}) / Ք_{ՊՀ.ԱՊ.ԸՔ}$

$Ի_{ՀՏ.ՄՓ.Ի} = Ծ_{ՀՏ.ՓԿՄԾ} / Ք_{ՀՏ.ՓԿՄ.Ք}$,

որտեղ՝

$Ծ_{ՀՏՄԾ.ԱԳ}$՝ հաշվետու տարվա ընթացքում հանքի շահագործման (արտադրական) մակաբացման ծախսերի առավելագույն գումարը, որն անմիջականորեն կարող է ներառվել այդ տարվա ընթացքում արդյունահանված օգտակար հանածոյի ինքնարժեքում

$Գ_{ԱՓ.ՄՊ.ՄՔԳ}$՝ արդյունահանված միավոր պաշարին (տոննայով) բաժին ընկնող արդյունահանման փուլի մակաբացման քանակի գործակիցն է,

$Q_{ՊՀ.ԱՊ.ԸՔ}$՝ պետության կողմից սահմանված կարգով հաստատված՝ արդյունահանման ենթակա պաշարների ընդհանուր քանակն է, առանց նախկինում արդյունահանված պաշարների քանակը նվազեցնելու: Արդյունահանման ենթակա պաշարների ընդհանուր քանակը որոշելիս հաշվի են առնվում այդ պաշարների քանակի՝ սահմանված կարգով իրականացված փոփոխությունները,

$Ի_{ՀՏ.ՄՓ.Ի}$՝ հաշվետու տարում կատարված մակաբացման աշխատանքների փաստացի ինքնարժեքն է մեկ տոննայի հաշվարկով,

$Q_{ՄԱՓ.ՄԸ.Q}$ ՝ հանքի մշակման և արդյունահանման փուլերում պետության կողմից սահմանված կարգով հաստատված մակաբացման աշխատանքների ընդհանուր քանակն է՝ տոննայով,

$Q_{ՄՓ.ՓՄ.Q}$՝ հանքի մշակման փուլում փաստացի կատարված մակաբացման քանակն է՝ տոննայով,

$Q_{ՀՏ.ԱՊ.Q}$՝ հաշվետու տարում արդյունահանված պաշարների քանակն է՝ տոննայով,

$Ծ_{ՀՏ.ՓԿՄԾ}$՝ հաշվետու տարվա ընթացքում փաստացի կատարված շահագործման (արտադրական) մակաբացման ծախսերի հանրագումարն է,

$Q_{ՀՏ.ՓԿՄ.Q}$՝ հաշվետու տարում փաստացի կատարված մակաբացման քանակն է ՝ տոննայով:

7. Հաշվետու տարվա ընթացքում շահագործման (արտադրական) մակաբացման ծախսերի գումարը ներառվում է այդ տարվա ընթացքում արդյունահանված օգտակար հանածոյի ինքնարժեքում, բայց ոչ ավելի, քան հաշվետու տարվա ընթացքում հանքի շահագործման (արտադրական) մակաբացման ծախսերի առավելագույն գումարը:
8. Հաշվետու տարվա ընթացքում շահագործման (արտադրական) մակաբացման ծախսերի գումարի այն մասը, որը գերազանցում է հաշվետու տարվա ընթացքում հանքի շահագործման (արտադրական) մակաբացման ծախսերի առավելագույն գումարը, ավելացվում է մշակման փուլի մակաբացման գծով ակտիվի արժեքին:Մշակման փուլի մակաբացման ակտիվը՝ հաշվի առած նշված ավելացումները, ամորտիզացվում է սույն կարգի երկրորդ բաժնի համաձայն: